

Իմ երկինքս ալ կը հրճուի ոսկեծիծաղ լոյսիդ տակ,
Ու մոռցըւած բուրմունքներ զիս կըզգլխեն վերստին:

Պրիսմակ մըն ալ ե՛ս ունիմ, ու կը դիտեմ ցնծագին
Սիրոյդ արեւը պայծառ, սիրոյդ արե՛ւը ջերմին,
Ու խանդաբորբ իմ հոգիս հանդէպ անոր պաշտումին,
Մանո՛ւկ մըն է որ կայներ դեմս հըրածամ արեւին...

29. ԻՂՁԵՐ

Կես գիշերուան բուրումնահեղց վարդերով,
Որոնք գինով ցօղ ու շաղի կըսպասեն,
Պիտի հիւսեմ մանեակ մը նուրբ
Շուրջն սպիտակ պարանոցիդ.
Եւ այգուն
Պիտի գտնես ցօղուած՝ վարդերն այդ անոյշ՝
Իմ արցունքիս ցօղերով:
Ու օր մըն ալ,
Երբ թարշամի
Քայռն այդ ծաղիկ անուրջին,
Պիտի հիւսեմ նոր նարօտներ ոսկելար
Անոր յուշքին տեղ բոսոր,
Իմ համբոյրիս բոց ու բուրեան վարդերով:
Երազանուրբ ձիւնաթորմի ձեռքերուդ
Պիտի բերեմ մեղեսիկէ մատնիներ՝
Ու քօղէքներ արեւակէ.
Եւ երբ անոնց ցոլքը մարի աննըշոյ,
Տենչանքներուս բազմերանգ
Բոցով զանոնք պիտի վառեմ անդադար:
Ու լարերուն տեղ վիսին հինաւուրց
Պիտի դընենք արծաթ թելերն ըղձանքներուդ՝
Որոնք յաւէտ պիտի թրթռան
Տրոփումներովն իմ սրտիս:
Գինով՝ դիւթիչ բուրմունքներէն ծաղիկներուն ըզգլխիչ
Ո՛վ դիւթանոյշն իմ սրտիս,
Պիտի յածինք միասին,
Ընթադրելով բոյս ու ծաղիկ ու դալար,
Ու լալով